ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 03.10.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Միքայելյան,
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի տեղագրաերկրաբաշխական, նավարկային և պլանավորման բաժանմունքի սպա, մայոր Գ. Հովսեփյան,
Բացակայում է՝
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի երկրատեղեկատվական և պլանավորման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ս. Պետրոսյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:
Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 03.10.2019թ. ներկայացրած մասնագիտական եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց «ԳԵՈՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը գնահատել բավարար:
Քանի որ 02.10.2019թ. ստացված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են, ուստի հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:
1.2 03.10.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:
1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Գևորգյան)

Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Տ. Մաթևոսյան

Գնահատող Ա. Միքայելյան

Գնահատող Գ. Հովսեփյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան